

ԵՐԿՐԻ ՄԱՆՈՒԿ ԵՐԱԺՇՏԱԳԵՏՆԵՐ.

Հարկ ենք համարում «Արարատի» ընթերցողներին ծանօթացնել այն երկու մանուկ երաժշտագէտների հետ, որոնցով հիացած է Ռուսաստանն ու ամբողջ Եւրոպան, և որոնց մասին այնքան շատ զրուել է ոռւս և օտար մամուլում:

Դրանցից համեմատաբար մեծը, որ կոչում է Եաշա Խէյֆից, ընդամենը 12 տարեկան, չութակի նուագով զարմանք ու հիացմունք է պատճառում բոլորին: Նրա մասին Եւրոպայի յայտնի ջութակահարներն ու երաժշտագէտները վկայում են, որ նա նուագում է վերին աստիճանի վարպետորէն, ինչպէս կընուագէր մասնագէտ և շնորհալի ջութակահարը: Մանուկ Խէյֆիցը ամենալուրջ երկերը նուագիլիս կատարում է բոլոր նիւանները, բոլոր գինամիք, ազոգիկ և էքսպրեսիվ նուրբ արտայայտութիւնները: Բացի դրանից նրա նուագը պարունակում է նաև խորը զգացմունք ու թողնում է տաղանդաւոր երաժշտագէտի կատարման տպաւորութիւն: Զնայած մանուկ հասակին, նրա բեպերառուարը շատ մեծ է, և լուրջ, նա նուագում է Մօյարտից, Երնստից, Բէթհովէնից, Մենդելսոնից և այլ երաժշտագէտների լուրջ և գժուարին կատարելի երաժշտական երկերից:

Միւս մանուկ երաժշտագէտը, այդ Վիլի Ֆերբերօն է, 7 տարեկան մի փենօմին, որպիսին երաժշտութեան պատմութեան մէջ եղակի դէպքն է, որ տեղի է ունենում Ֆեռնիրօն նոյնիսկ հոգերանների, մանկավարժների, բժիշկների և առհասարակ զանազան մասնագէտ զիտնականների ուսումնասիրութեան առարկայ է դարձել:

Օրկեստրային այն երկերը, որոնք առանց գժուարութեան չեն կարողանում կառավարել սովորական մասնագէտ դիրիֆօրները, Վիլի Ֆերբերօն այդ բոլորն ամենայն հեշտութեամբ է կառուալարում և առանց որ ևէ պարտիտուրայի: Տեսնուած բան չէ, որ մի, նոյն խոկ ամենայայտնի երաժշտագէտ անգիր կարողանայ կառավարել այնպիսի լուրջ երկեր, ինչպիսին Վագների, Սիրելիուսի և այլ երաժշտագէտների գրուածքներն են: Դորա համար հարկաւոր է աներեսակայելի չափով խոշոր երաժշտական յիշողութիւն, հանճար և ամենակատարեալ զարգացումն երաժշտական ընդունակութեան, որպիսի տուեաններով դրականապէս օժտուած պէտք է համարել 7 տարեկան մանուկ Վիլի Ֆերբերօն: Այդ բոլորից յիսոյ XX դարը իրաւամբ, ինչպէս ասում են, հրաշալիք-

ների դար պէտք է կոչուի Միւս կողմից սակայն վերագրել այդ ամենը հրաշքների անշուշտ պէտք չէ.—փոքրիկ երաժշտագէտների ֆինօմենալ խնդրում ամենանպաստաւոր դերը կատարել է նրանց երաժշտական շրջապատը։ Մեր մէջ է միայն, որ երաժշտական արուեստը վերին աստիճան աննախանձելի դրութիւն ունի, և երաժշտական զարգացում ստացածները ներկայանում են, որ պէս բացառիկ երևոյթներ, մանաւանդ հայկական իրականութեան համար։

Ընդունելով երկու մասուկ երաժշտագէտների երեան գալը, որպէս բացառիկ երևոյթ, աւելորդ չեմ համարում կցել, որ աչքի ընկնող ընդունակութիւններով օժտուած մասուկներ մենք էլ անշուշտ շատ կունենանք, իթէ մեր ծնողներն այդ ընդունակութիւնները զարգացնելու համար և որ և է հնարաւորութիւն կամ նպաստաւոր հանգամանք ստեղծեին։

Minor

>○↔••○<

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴ

Նորին Սրբութեան Վեհափառ Կաթուղիկոսի հրամանով «Արարատ»ի սոյն համարում զետեղելով Դպրոցական ժունի համար մինչև ներկայ թուի Փետրուարի 7-ը ստացուած գումարների հաշիւը, կարենոր ենք համարում համառօտակի այստեղ առաջ բերել Հայոց տառերի գիւտի 1500 ամեայ և հայ տպագրութեան 400 ամեայ Ազգային Մեծ Յորելեանի շուրջը եղած կարգագրութեանց մասին։

Պատմական այս Մեծ Յորելեանն անշուշտ անհրաժեշտ էր ընդմիշտ յաւերժացնել ազգօգուտ մի մեծ գործով։ Հայ ժողովուրդն ունի կարիքների մեծ ծով։ սակայն այդ կարիքներից ամենաանհրաժեշտն և Ազգիս Վեհափառ Հայրապետի սրտին ամենից մօտ՝ ամենից ցանկալին անշուշտ իւր ժողովրդի լուսաւորութեան գործն է՝ միջոց տալ օգտուելու հայ ժողովրդի հազարաւոր ուսումնազուրկ մասուկներին զրի ու տպագրութեան վրկարար բարիքներից։ Եթէ 1500 տարի առաջ Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ տուին հայ ժողովրդին գիր, գրականութիւն ու դպրոց, իսկ Ս. Գրքի թարգմանութեամբն էլ հնարաւորութիւն տուին օգտուելու քրիստոնէական լուսոյ աղբիւրից և լուսաւորելու իրենց սիրտն՝ ու միտքը՝ բնականարար Ազգիս Վեհափառ կա-